Հավելված
առողջապահության նախարար
2022 թվականի դեկտեմբերի 22-ի
N 5941 - Լ հրաման

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-302

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

**Մարատ Ստեփանյան Ա/Ձ-ի**
(իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

**Առողջապահության նախարարությունը,**

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավո քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

**Մարատ Ստեփանյան Ա/Ձ-ն (լիցենզիա*)**

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Մարատ Ստեփանյանի, որը գործում է Մարատ Ստեփանյան Ա/Ձ-ի կանոնադրության հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյա մասին.

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ հավելված 1-ով սահմանված Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով՝ առողջապահության նախարարի հրամանով հաստատված բժշկական օգնության և սպասարկնման ծառայությունների ցանկի և գների, և սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

## II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Կատարողն իրավունք ունի.**

2.1.1.սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալներով մատուցվա Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունն լրացուցիչ փաստաթղթեր և հիմնավորումներ ներկայացնելու միջոցով,

2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքո սահմանված կարգով մուտքագրված, սակայն փոխհատուցման չներկայացված (կասեցված) ծավալները հաշվետու ժամանակահատվածում ներկայացնլ Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները

2.1.5. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

**2.2. Կատարողը պարտավոր է.**

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար հրամաններին համապատասխան,

2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային օրվա ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչ դեկտեմբերի 15-ին հաջորդող 3-րդ աշխատանքային օրվա ավարտը) էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և Պատվիրատուի ներկայացնել Բուժօգնության շրջանակներում փոխհատուցման համար հիմք հանդիսացող մատուցված ծառայությունների վերաբերյալ HP-011, SC-01 COVID-01 հաշվետվությունները՝ ոչ ավել Նախարարի կողմից պայմանագրային գումարի տվյալ ամսվա համար հաստատված համամասնության չափ (բացառությամբ ԱԱՊ մարդաշնչով (per capita) փոխհատուցվող ծառայությունների, որոնք հաշվարկվում են օրական կտրվածքով՝ էլեկտրոնայի առողջապահության համակարգի միջոցով ինքնաշխատ ձևով),

* Ա-XX-000373 տրված 06/04/2010թ-ին, Ա-XX-000453 տրված 11/05/2011թ-ին, Ա-ԲՕ-000628 տրված 12/02/2013թ-ին:

2.2.3. ներկայացնել սույն պայմանագրի N2 հավելվածով նշված ծրագրերին համապատասխան առանձին հանձնման-ընդունման արձանագրություններ հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ Նախարարի կողմից և այլ իրավական ակտերո սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

2.2.4. ապահովել սույն պայմանագրի N3 հավելվածով սահմանված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններո հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման պայմանները»-ը,

2.2.5. մատուցված ծառայությունները սահմանված կարգով ներկայացնել փոխհատուցման՝ հաշվի առնելով Նախարարի կողմից տվյալ ծառայություններ համար հաստատված գները և փոխհատուցման առանձնահատկությունները,

2.2.6. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվու տեսանելի վայրերում փակցնել պետական պատվերի ծառայությունների ծավալների և շահառուների վերաբերյալ տեղեկատվական պաստառները,

2.2.7. պացիենտի հետ կնքել Նախարարի հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկակա օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.8. ապահովել Բուժօգնություն ստացող անձանց Նախարարի համապատասխան հրամաններով հաստատված իրազեկման թերթիկների լրացումը տրամադրումը պացիենտներին.

2.2.9. անկախ ֆինանսավորման աղբյուրներից և ուղղություններից ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակայի օգտագործումը՝ պահպանելով դրամական միջոցների ելքերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները՝

1) աշխատավարձ,

2) հարկային պարտավորություններ,

3) դեղերի և բժշկական նշանակության ապրանքների դիմաց վճարում,

4) այլ վճարումներ,

2.2.10. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի առնվազն նվազագույ ամսական չափերը՝ Նախարարի հրամաններով հաստատված աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչների համապատասխան,

2.2.11. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպե նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.12. ապահովել վճարովի սկզբունքով իրականացրած բժշկական օգնության և սպասարկման ծավալների Պատվիրատուի կողմից սահմանված կարգով հաստատված ձևերով հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում տեխնիկական չափանիշներին համապատասխան,

2.2.13. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվո վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.14. ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալների սահմանված կարգով մուտքագրումը և դրանց թարմացումը,

2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվո տեղեկատվության գաղտնիությունը,

2.2.16. ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրված տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար Հ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Կատարողը,

2.2.17. պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ձևով վերակազմակերպման, լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դր մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,

2.2.18. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքու ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը (այդ թվում բժշկական օգնության և սպասարկմա վճարովի հիմունքներով իրականացվող ծառայությունների վերաբերյալ), ապահովել համապատասխան մասնագետների, այդ թվում սույն պայմանագր 2.3.2 կետով նախատեսված Պատվիրատուի մշտական ներկայացուցիչների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքներ ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,

2.2.19. ապահովել սույն պայմանագրի գաղտնի N4 հավելվածով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքո իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,

2.2.20. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

**2.3. Պատվիրատուն իրավունք ունի.**

2.3.1. սույն պայմանագրի համաձայն ինչպես էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով, այնպես էլ տեղում իրականացնել դիտարկումնե մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում՝ Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարար կողմից հաստատված հրամաններով և Պայմանագրով սահմանված ծավալների Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվությա արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերո սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելլ ողջամիտ ժամկետ,

2.3.2. ունենալ մշտական ներկայացուցիչ 500 մլն. դրամ և ավել տարեկան պայմանագրային ծավալ ունեցող բժշկական կազմակերպություններու Ներկայացուցիչների աշխատակարգը, պարտականությունները և իրավունքները կարգավորվում է նախարարի համապատասխան հրամանով,

2.3.3. Կատարողի կողմից պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկմա փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելլ ծառայությունն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագա հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել մշտադիտարկում, դիտարկում կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված

2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացվա հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,

2.3.4.2. մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելիս՝ վճարվելիք գումարներից հաշվարկել և հաշվանցել պայմանագրո սահմանված տույժերը ու տուգանքները,

2.3.4.3. Բուժօգնության այն ծավալները, որոնց դեպքում Կատարողի կողմից չեն պահպանվել ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրութները,

2.3.4.4. Բուժօգնության այն ծավալները, որոնց դեպքում Կատարողի կողմից չեն պահպանվել էլեկտրոնային առողջապահության համակար մուտքագրման պայմանները,

2.3.5. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը Պատվիրատուի կողմից նախազգուշացնելուց հետո պայմանագր գործողության ընթացքում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.5.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,

2.3.5.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը: Ընդ որում սույն պայմանագր
շրջանակներում փոխհատուցման ենթակա փաստացի ծախս է համարվում Կատարողի կողմից ներկայացված և Պատվիրատուի կողմից ընդունված, սակայ
դեռևս չֆինանսավորված Բուժօգնության ծավալները: Ընդ որում առանց հերթագրման սկզբունքի բուժօգնության կազմակերպման մասով ընդունված ծավ
է համարվում տվյալ ծրագրերի/միջոցառումների շրջանակներում փաստացի մատուցած Բուժօգնության ծավալները, սակայն ոչ ավել, քան նշվա
ծրագրերի/միջոցառումների տարեկան պայմանագրային գումարը:

2.3.6. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կա բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստան Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթ արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությա համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքո պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքո սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետո նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատու այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը.

2.3.7. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիր խախտելն էական է համարվում, եթե.

2.3.7.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

2.3.7.2. սահմանված ժամկետներում չի իրականացնում պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարումները, չի վերացնում (Հ պետական բյուջե վճարման պարտավորության առաջացման դեպքում չի հատուցում) Պատվիրատուի կողմից արձանագրված խախտումները և/կա թերությունները, անկախ Կատարողի կողմից դրանց ընդունման հանգամանքից: Ընդ որում Կատարողի կողմից չընդունման դեպքում վեճերը լուծվում ե համաձայն 7.4 կետի:

2.3.8. սահմանել Բուժօգնության փոխհատուցման առանձնահատկություններ,

2.3.9. հատկացված միջոցների սահմաններում կազմակերպությունների կանխատեսվող թերակատարումների և գերակատարումների համամասնությամ պայմանագրային գումարներում սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխություններ (պակասեցումներ և/կամ ավելացումներ),

2.3.10. Բուժօգնության վերաբերյալ կազմված արձանագրությունները Կատարողի կողմից ողջամիտ ժամկետում չճշգրտելու և/կամ պատճառաբանվա եղանակով արձանագրությունների չընդունման վերաբերյալ առարկություն չներկայացնելու դեպքում՝
ինքնուրույն իրականացնել փոխհատուցման ընդունված Բուժօգնության ծավալների ճշգրտում:Ընդ որում Պատվիրատուն ինքնուրույն կարող իրականացնել փոխհատուցման ընդունված բուժօգնության ծավալների ճշգրտում նաև Կատարողի կողմից սույն կետի համաձայն ներկայացրա պատճառաբանված առարկությունները չընդունելու դեպքում: Սույն կետի մասով ողջամիտ ժամկետը սահմանվում է Պատվիրատուի կողմից:

2.3.11. կրել իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

**2.4. Պատվիրատուն պարտավոր է.**

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ սահմանվա կարգով ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման: Վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով, գումարը Կատարող բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով: Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.4.2 կետով սահմանված ժամկետում մատուցվա ծառայությունները չընդունելու կամ չմերժելու դեպքում այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդո աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որու պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմմա ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում սույն պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին էլեկտրոնայի նամակի ուղարկման ամսաթիվը).

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրման գործընթացը և այլ անհրաժեշ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25- Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, առողջապահության նախարարության պաշտոնական կայքու ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավակա ակտերը,

2.4.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել տեղեկատվության գաղտնիությունը,

2.4.5. ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգում Կատարողի կողմից կատարողականների և ֆինանսավորման չափաքանակներ վերաբերյալ տեղեկատվությունը կամ տեսանելիությունը,

2.4.6. պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիր ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակմա ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրու հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրու հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին,

2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

## III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանությա գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ ընթացի կամ տեղերում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով

## IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար սահմանվում են տույժեր տուգանքներ: Տուգանքի չափը կազմում է պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսը, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսը: Ընդ որում, տուգանք հաշվարկվում է նաև պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը պայմանագրով սահմանված ժամկետներում կատարելու, սակայ պատասխանատու ստորաբաժանման կողմից պայմանագրի արդյունքը չընդունվելու դեպքում: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերո պայմանագրի չկատարված մասի գումարի նկատմամբ:

4.2 Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև.

4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրված տվյալներում յուրաքանչյուր ենթամիջոցառման (ծածկույթ մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների թիվը ամսական կտրվածքով գերազանցում է նույն ենթամիջոցառման (ծածկույթ շրջանակներում ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակ Բուժօգնության տրամադրումը՝ եթե դրա մասին Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգա գրավոր տեղեկացվել է և նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվել է կամ խախտումը չի վերացվել,

4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացված յուրաքանչյուր աշխատանքայի օրվա համար գանձվում է տույժ, որը հաշվարկվում է պայմանագրի գումարի նկատմամբ՝ 0,05%-ի չափով,

4.4. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ժամանա Պատվիրատուին անհրաժեշտ փաստաթղթերի և այլ անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու դեպքում Կատարողի նկատմամբ սահմանվում տուգանք Պայմանագրի ընդհանուր գումարի 0,5%-ի չափով: Սույն կետի կիրառության մասով, եթե Կատարողը Բուժօգնություն է մատուցում առան պայմանագրային գումարի սահմափակման սկզբունքով փոխհատուցվող ծրագրերի/միջոցառումների շրջանակում, ապա սույն պայմանագրի N հավելվածով սահմանված պայմանագրային գումարին գումարվում է տուգանքի նշանակման պահին նշված ծրագրերի/միջոցառումների շրջանակներու փաստացի մատուցած Բուժօգնության ծավալը,

4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի N 3 հավելվածում՝ «Ծառայություններ մատուցման պայմաններ»-ում նշված պարտավորությունների չկատարման համար,

4.6. սույն պայմանագրի շրջանակներում ընթացիկ կամ տեղում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատակա վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածու Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի ծառայությունների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողությա ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխա հաշիվներին,

4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համա ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,

4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,

4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշա կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում ե պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարո կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելլ քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարի են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապ Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմեր կատարած ծախսերը,

6.2. սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.5.2, 2.3.6, 2.3.7 և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,

6.3. սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,

6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

## VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2023 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 202 թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2023թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամ բացառությամբ Պայմանագրի 2.3.6. կետի: Ընդ որում՝ մինչև Պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարում իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում,

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագր անբաժանելի մասը,

7.3. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմեր փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրի շրջանակու մատուցվելիք ծառայության գնման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմեր պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ: Սույն կետը կիրառելի Կատարողի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,

7.4. Պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցում իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում դադարեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները,

7.5.կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

7.7. սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության,

7.7.1 պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտա¬կանությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմի հաշվառված լինելու հանգամանքը

7.8 սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի N4 հավելվածի,

## VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Առողջապահության նախարարություն**

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Սպասարկող բանկ ՖՆ գործառնական վարչություն

Բանկային հաշիվ 900011105013

ՀՎՀՀ 02507171

Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝

Վարդանուշ Գրիգորյան

GRIGORYAN VARDANUSH 6802780100

Digitally signed by GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Date: 2023.01.27 17:58:17 +04'00'

/ստորագրություն/

« 23 » հունվարի 2023 թ

Հեռ: +37460808003

Ֆաքս:

E-mail: info@moh.am

**ԿԱՏԱՐՈՂ**

**Մարատ Ստեփանյան Ա/Ձ**

Հասցե ք.Գյումրի Շիրակացի 201/2

Սպասարկող բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ

Բանկային հաշիվ 2050132031581001

ՀՎՀՀ 57260763

Տնօրեն՝

Մարատ Ստեփանյան

/ստորագրություն/

« 23 » հունվարի 2023 թ

Հեռ: +37431248502

Ֆաքս:

E-mail: apavendiagnostics@mail.ru

*Հավելված 1*
*ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-302*
*Պայմանագրի*

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇԻՐԱԿ

ՄԱՐԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ Ա/Զ-302
(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը, կոդը)

| Տեսակի կոդ | Բժշկական օգնության և սպասարկման տեսակը | |
|---|---|---|
| 2.17 | Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություն | |
| 9 | ՀՀ ԱՆ հրամանով կատարվող բուժօգնություն | |

*Հավելված 2*
***ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-302***
*պայմանագրի*

**2023 թվականի պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերը և պայմանագրային գումարները**

**Մարատ Ստեփանյան Ա/Ձ**
(Բուժհաստատության անվանումը)

| Ծրագիր | Միջոցառում | Բժշկական օգնության և սպասարկման ծրագրի անվանումը | Չափման միավորը | | 2023 թվականի պայմանագրային գումար |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 6 |
| | | **Ընդամենը, այդ թվում՝** | x | | 6 760 148 |
| 1099 | | **Առողջության առաջնային պահպանում, այդ թվում** | X | | 0 |
| | 11001 | **Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն, այդ թվում** | x | | 0 |
| | | **Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ** | ազգաբնակչություն | | 0 |
| | | Մեծահասակների առողջության առաջնային պահպանում | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | Երեխաների առողջության առաջնային պահպանում | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | Դիսպանսերային բժշկական օգնություն, որից | x | | 0 |
| | | *Հոգենյարդաբանական* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Էնդոկրինոլոգիական* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Ինֆեկցիոն* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Հակատուբերկուլյոզային* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Ուռուցքաբանական* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Մաշկավեներաբանական* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Արյունաբանական* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Նարկոլոգիական* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Դիսպանսեր ծառայությունների լաբորատոր-գործիքային հետազոտությունների համար (ներառյալ կցագրված տարածքի բնակչության համար իրականացվող տուբերկուլյոզի բժշկական օգնության և սպասարկման մասով)* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Դիսպանսեր ծառայությունների լաբորատոր-գործիքային հետազոտությունների համար (ներառյալ կցագրված տարածքի բնակչության համար իրականացվող ուռուցքաբանական բժշկական օգնության և սպասարկման մասով)* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | **Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա, որից** | x | | 0 |
| | | *Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող (անմիջական սպասարկման տարածքի համար)* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող (կցագրված տարածքի համար)* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | *ընտանեկան բժշկի կողմից իրականացվող գինեկոլոգիական բուժօգնություն անմիջական սպասարկման տարածքի համար* | ազգաբնակչություն | 0 | 0 |
| | | **Ընտանեկան բժիշկների կողմից նեղ մասնագիտացված խորհրդատվության ուղեգրում** | x | | 0 |
| | | **Ընտանեկան բժիշկների կողմից լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրում** | x | | 0 |
| | | **Անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղեր** | x | | 0 |
| | | **Հղիների հսկողություն** | x | | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության ընթացքում, ինչպես նաև կանանց և 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատման նպատակով կատարվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ | x | | 0 |
| | | Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց արտահիվանդանոցային փորձաքննություն, այդ թվում | x | | 0 |
| | | Զինկոմիսարատներին կից բժշկական հանձնաժողովներ | x | | 0 |
| | | Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային ուղեգրման ճանապարհածախս | x | | 0 |
| | | Պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում | x | | 0 |
| | | ԱԱՊ բժշկի գործունեությունը գնահատող ցուցանիշների կատարման դիմաց ֆինանսավորում | x | | 0 |
| | | Ըստ գործունեության ցուցանիշների բոնուսային վարձատրություն | | | 0 |
| | | Հեպատիտ Ց-ի ախտորոշման և բուժման ծրագրի շրջանակներում իրականացվող հետազոտություններ | x | | 0 |
| | | Բուժքույրերի կողմից իրականացվող բժշկական օգնություն ԲՄԿ-ներում | բուժքույր | 0 | 0 |
| | | Բուժքույրերի կողմից երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում | աշակերտ | 0 | 0 |
| | | Ընտանեկան բժիշկի կողմից տնային կանչեր աշխատաժամից դուրս՝ շտապօգ. մեքենայով | x | | 0 |
| | | Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում | x | | 0 |
| | | Կոլոռեկտալ քաղցկեղի սքրինինգ | | | 0 |
| | | Այլ, մյուս խմբերում չընդգրկված տիպի բժշկական օգնություն և սպասարկում, որից | x | | 0 |
| | | Հղիների նախածննդյան հսկողության բարելավման, սկրինինգների ընդլայնման ենթածրագրի կատարումն | x | | 0 |
| | | Երիտասարդների վերարտադրողական ներուժի բարելավման ենթածրագրի կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում իրականացվող հետազոտություններ | x | | 0 |
| | 11004 | Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ մասնագիտացված կենտրոններում | x | | 0 |
| 1142 | | Դատաբժշկական և ախտաբանանատոմիական ծառայություններ, այդ թվում | x | | 0 |
| | 11001 | Դատաբժշկական ծառայություններ | x | | 0 |
| | 11002 | Ախտաբանանատոմիական հետազոտություններ | x | | 0 |
| 1200 | | Մոր և մանկան առողջության պահպանում, այդ թվում | x | | 0 |
| | 11003 | Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ | x | | 0 |
| | 11004 | Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ | x | | 0 |
| | 11006 | Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ | x | | 0 |
| | 11007 | Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի և լսողության խանգարումների վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սկրինինգի անցկացում | x | | 0 |
| 1201 | | Շտապ բժշկական օգնություն, այդ թվում | x | | 0 |
| | 11001 | Շտապ բժշկական օգնության ծառայություններ | | | 0 |
| 1202 | | Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում, այդ թվում | | | 0 |
| | 11002 | Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում | x | | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային բժշկական օգնություն (emergency) | x | | 0 |
| | | Անհետաձգելի բժշկական օգնություն | x | | 0 |
| | | Աորտայի անևրիզմային շերտազատման վիրահատական բուժում | | | 0 |
| | | Գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ ինսուլտի բուժում | x | | 0 |
| | 11003 | **Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում** | x | | 0 |
| | | Դեղորայքի և սննդի ծախսեր | x | | 0 |
| | | Այլ ծախսեր | x | | 0 |
| | 11004 | **ՈՒռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում** | x | | 0 |
| | | Ուռուցքաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ | x | | 0 |
| | | Ուռուցքաբանական հիվանդությունների վիրահատական բժշկական օգնության ծառայություններ | x | | 0 |
| | | Արյունաբանական ծառայություն | x | | 0 |
| 1207 | | **Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնության, այդ թվում** | x | | 6 760 148 |
| | 11001 | **Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում** | x | | 6 760 148 |
| | | Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների սրտի վիրահատություններ | x | | 0 |
| | | Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն և բուժում | x | | 0 |
| | | Արտահիվանդանոցային դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ | x | | 6 760 148 |
| | | Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնություն | x | | 0 |
| | 11002 | **Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ** | x | | 0 |
| | 11007 | **Փոխպատվաստման ծառայություններ** | x | | 0 |
| 1208 | | **Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր, այդ թվում** | x | | 0 |
| | 11001 | **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ** | x | | 0 |
| | 11002 | **Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ** | x | | 0 |
| | 11003 | **Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ** | x | | 0 |

*Հավելված 3*
*ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-302*
*Պայմանագրի*

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման պայմանները | Կատարողի պատասխանատվությունը |
|---|---|
| **Գլուխ Ա. Հիվանդանոցային Բուժօգնություն**<br>Պետպատվերի շրջանակներում անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալները ընդգրկում են բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ միջոցների հաստատված ծավալները, այդ թվում. | |
| 1. Բուժօգնություն ստացող պացիենտի ընդունման, ախտորոշման, բուժման պլանի և դուրս գրման իրականացումը գործող իրավական ակտերով սահմանված ձևերով և կարգով: | 1-ին կետում նշված պայմանները գործող իրավական ակտերով սահմանված ձևերով և կարգով չկատարման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 5000 դրամի չափով: |
| 2. Բուժօգնություն ստացող պացիենտի բուժման համար անհրաժեշտ լաբորատոր ախտորոշիչ, գործիքային հետազոտությունների և/կամ մասնագիտացված խորհրդատվությունների ամբողջ ծավալով իրականացումը, ընդ որում արգելվում է պետպատվերով բուժման ուղեգիր ունեցող կամ անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերում պետական պատվերի շրջանակներում բուժօգնության ստացման իրավունք ունեցող պացիենտներին մինչ ստացիոնար ընդունվելը վճարովի հետազոտություններ և/կամ մասնագիտացված խորհրդատվություններ իրականացնելը: | 2-րդ կետում նշված լաբորատոր ախտորոշիչ և/կամ գործիքային հետազոտությունների հաստատված ծավալները բուժման ընթացքում ամբողջովին կամ մասնակի չիրականացման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 20 000 դրամի չափով, իսկ պետպատվերով բուժման ուղեգիր ունեցող կամ անհետաձգելի հիվանդանոցային բուժման ցուցումներով հիվանդանոցային բուժման ընդունված պացիենտներին մինչ ստացիոնար ընդունվելը վճարովի հետազոտություններ իրականացնելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում տվյալ դեպքի ամբողջ գումարի 20%-ի չափով և պացիենտի կողմից վճարված գումարները ենթակա են վերադարձման կամ դրա անհնարինության դեպքում պետական բյուջե փոխանցման: |
| 3.Բուժօգնություն ստացող պացիենտի բուժման համար անհրաժեշտ ծառայությունները, որոնք բացակայում են տվյալ բժշկական կազմակերպությունում, Կատարողը պարտավոր է կազմակերպել պայմանագրային հիմունքներով | 3-րդ կետում նշված պայմանները չպահպանելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում տվյալ ծառայության գնի չափով և պացինետի կողմից վճարված գումարները ենթակա են վերադարձման կամ դրա անհնարինության դեպքում բյուջե փոխանցման: |
| 4. Լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունների և բուժման պլանի համապատասխանությունը ախտորոշմանը և բուժմանը: | 4-րդ կետում նշված պայմանները չպահպանելու դեպքը փոխհատուցման չի ընդունվում: |
| 5. Բուժօգնություն ստացող պացիենտի բուժման համար անհրաժեշտ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ապահովումը կազմակերպության միջոցների հաշվին, ընդ որում առանձին դեպքերում բուժումը պացիենտի կողմից ձեռք բերված դեղերով թույլատրվում է կազմակերպել միայն պացիենտի գրավոր համաձայնությամբ՝ հիվանդության պատմագրի մեջ ձևակերպված հիմնավորվածությամբ և բժշկական կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի թույլտվությամբ: | 5-րդ կետում նշված կարգի խախտման դեպքում, այդ թվում՝ եթե հիվանդանոցում դեղերի առկայության պարագայում տվյալ դեղը ձեռք է բերվել պացիենտի կողմից՝ կատարողականից նվազեցվում է տվյալ դեպքի արժեքի 25%-ը:<br>Հիվանդների բուժման համար ծախսված դեղերի տեսականու առնվազն 75%-ը չապահովելու դեպքում տվյալ դեպքը փոխհատուցման չի ընդունվում:* |
| 6. Պետական պատվերով Բուժօգնություն ստացող պացիենտներին ապահովել անվճար հիվանդասենյակով, իսկ պացիենտի ցանկության դեպքում մատուցել վճարովի ոչ բժշկական ծառայություններ՝ տեսակցության վճար, խնամողի համար նախատեսված վճարումներ, լրացուցիչ հարմարություններով հիվանդասենյակի համար վճար և այլն: Ընդ որում, պացիենտի կողմից վճարովի ծառայության ընտրության դեպքում նրա հետ կնքվում է համապատասխան պայմանագիր: | 6-րդ կետով սահմանված պահանջները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում տվյալ դեպքի ամբողջ գումարի 20%-ի չափով, իսկ պացինետի կողմից վճարված գումարները ենթակա են վերադարձման Կատարողի կողմից: |

| | |
|---|---|
| 7.Պետական պատվերով բուժման իրավունք ունեցող պացիենտների Բուժօգնության նպատակով հերթագրումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշմամբ հաստատված «Բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգի պահանջների: | 7-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում դեպքը չի ընդունվում փոխհատուցման: |
| 8. Աշխատողների աշխատավարձերը սահմանել Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին և այլ իրավական ակտերին համապատասխան: | 8-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում Կատարողի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ չվճարված աշխատավարձի 20%-ի չափով:<br>Տուգանքի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պարտավորությունները չվճարված կամ պակաս վճարած աշխատավարձերի մասով ամբողջությամբ վճարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան: |
| 9.Պետպատվերի իրավունք ունեցող շահառուների դեպքում Կատարողի մեղքով Պատվիրատուի կողմից չընդունված դեպքերի ժամանակ Կատարողը իրավունք չունի փոխհատուցում պահանջել պացիենտներից: | 9-րդ կետում նշված պայմանները չպահպանելու դեպքում Կատարողի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ տվյալ ծրագրի պայմանագրային գումարի 0.05%-ի չափով, իսկ պացիենտի կողմից վճարված գումարները ենթակա են վերադարձման Կատարողի կողմից կամ դրա անհնարինության դեպքում բյուջե փոխանցման: |
| Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի կամ բուժհաստատության գործունեության վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի/ տեղեկատվության (այդ թվում վճարովի հիմունքներով մատուցված բժշկական օգնության և սպասարկման, ոչ բժշկական ծառայությունների վերաբերյալ) ներկայացում | Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի չտրամադրելը կամ տրամադրելուց հրաժարվելու դեպքում դեպքը փոխհատուցման չի ընդունվում:<br>Եթե Կատարողը հրաժարվում է տրամադրել կազմակերպության գործունեության վերաբերյալ օրենսդրությամբ չարգելված տեղեկատվություն, կամ տրամադրում է ոչ արժանահավատ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն, ապա նրա նկատմամբ կիրառվում է տուգանք ընդհանուր պայմանագրային գումարի 5%-ի չափով: |
| **Գլուխ Բ. Արտահիվանդանոցային Բուժօգնություն**<br>Պետպատվերի շրջանակներում անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալները ընդգրկում են առողջության առաջնային պահպանման ամբողջ ծավալը՝ այդ թվում. | |
| 1. Նախարարի կողմից համապատասխան չափորոշիչներով և այլ իրավական ակտերով հաստատված՝ առողջության առաջնային պահպանման բժիշկների, նեղ մասնագիտացված բուժօգնություն իրականացնող բժիշկների և դիսպանսերային կաբինետների բժիշկների կողմից բժշկական օգնության և սպասարկման ծավալների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների կատարումը: | 1-ին կետում նշված պայմանները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով: |
| 2. Հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրումը և իրականացումը Նախարարի կողմից հաստատված կարգի համաձայն: | 2-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 5000 դրամի չափով: |
| 3. Անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերի տրամադրման իրականացումը հաստատված իրավական ակտերին համաձայն: | 3-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով: |

| | |
|---|---|
| 4. Սահմանված կարգերի համաձայն բնակիչների գրանցման, հաշվառման և վարման իրականացումը: | 4-րդ կետում նշված փաստաթղթային ձևակերպումները սահմանված կարգով չկատարելու կամ թերի կատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում յուրաքանչյուր դեպքի համար 500 դրամի չափով: Ընդ որում եթե խախտում արձանագրվում է բնակչի/բնակիչների գրանցման փաստաթղթերում, ապա կիրառվում է տուգանք՝ գրանցման օրվանից սկսած բնակչի/բնակիչների Բուժօգնության կազմակերպման համար փոխհատուցված ամբողջ գումարի չափով: |
| 5. Նախարարի կողմից հաստատված կարգի համաձայն դեղերի ստացման, պահպանման, լրացման և հատկացման փաստաթղթային ձևակերպումների (մատյաններ, դեղատոմսեր, պահանջագրեր և այլ փաստաթղթեր) իրականացումը: | 5-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում 150 000 դրամի չափով: |
| 6.Աշխատողների աշխատավարձերի հատկացումը Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին և այլ իրավական ակտերին համապատասխան: | 6-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում Կատարողի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ չվճարված աշխատավարձի 20%-ի չափով:<br>Տուգանքի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պարտավորությունները չվճարված կամ պակաս վճարած աշխավարձերի մասով ամբողջությամբ վճարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան: |
| 7.Բժշկական ցուցումների առկայության դեպքում պետպատվերի շրջանակներում փոխհատուցվող լաբորատոր-գործիքային հետազոտությունների ամբողջությամբ անվճար իրականացումը: | 7-րդ կետով սահմանված լաբորատոր-գործիքային հետազոտությունները վճարովի իրականացնելու դեպքում կիրառվում է տուգանք վճարված գումարի կրկնապատիկի չափով, իսկ պացիենտի կողմից վճարված գումարները ենթակա են վերադարձման Կատարողի կողմից: |
| 8. Պացիենտների հիվանդանոցային ուղեգրումները (այդ թվում ուղեգրող հանձնաժողովների կողմից) իրականացնել սահմանված կարգերին համապատասխան: | 8-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում յուրաքանչյուր դեպքի համար 50 000 դրամի չափով: |
| 9.Պետական պատվերով բուժման իրավունք ունեցող պացիենտների Բուժօգնության նպատակով պացիենտների հերթագրման իրականացում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշմամբ հաստատված «Բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորնած անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգի պահանջների: | 1. 9-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում առանց հիմնավորման արտահերթ բժշկական օգնություն ստացած պացիենտների բուժման դիմաց, փոխհատուցված/փոխհատուցման ենթակա գումարը նվազեցում է կատարողականից:<br>2. հերթագրված և հերթը հասած պացիենտների բժշկական օգնությունը և սպասարկումը մերժելու և/կամ վճարովի իրականացնելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում յուրաքանչյուր դեպքի համար 150,000 դրամի չափով: Ծառայությունը վճարովի կազմակերպելու դեպքում կատարված վճարումները նաև ենթակա են վերադարձման: |
| Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի կամ բուժհաստատության գործունեության վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի/ տեղեկատվության (այդ թվում վճարովի հիմունքներով մատուցված բժշկական օգնության և սպասարկման, ոչ բժշկական ծառայությունների վերաբերյալ) ներկայացում | Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի չտրամադրելը կամ տրամադրելուց հրաժարվելու դեպքում դեպքը փոխհատուցման չի ընդունվում:<br>Եթե Կատարողը հրաժարվում է տրամադրել կազմակերպության գործունեության վերաբերյալ օրենսդրությամբ չարգելված տեղեկատվություն, կամ տրամադրում է ոչ արժանահավատ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն, ապա նրա նկատմամբ |
| **Գլուխ Գ. Անվճար շտապ բժշկական օգնության և սպասարկումը ընդգրկում է կանչի ապահովման և բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, այդ թվում.** | |
| 1. Կանչերի ընդունումը, վարումը և էլեկտրոնային առողջապահության համակարգեր մուտքագրումը Նախարարի կողմից հաստատված կարգերի համաձայն: | 1-ին կետում պահանջները սահմանված ձևերով և կարգով չկատարման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով: |

| | |
|---|---|
| 2. Պացիենտի ախտորոշման և իրականացրած բժշկական միջոցառումների, դեղերի համապատասխանությունը ախտորոշման հետ: | 2-րդ կետում նշված պարտավորությունները խախտելու դեպքում դեպքը փոխհատուցման ենթակա չէ: |
| 3. Նախարարի կողմից հաստատված կարգի համաձայն դեղերի ստացման, պահպանման, լրացման և հատկացման փաստաթղթային ձևակերպումները (մատյաններ, պահանջագրեր և այլ փաստաթղթեր): | 3-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում 150 000 դրամի չափով: |
| Աշխատողների աշխատավարձը սահմանումը Նախարարի հրամաններով հաստատված աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին և այլ իրավական ակտերին համապատասխան: | 4-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում Կատարողի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ չվճարված աշխատավարձի 20%-ի չափով:<br>Տուգանքի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պարտավորությունները չվճարված կամ պակաս վճարած աշխավարձերի մասով ամբողջությամբ վճարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան: |
| Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի կամ բուժհաստատության գործունեության վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի/ տեղեկատվության (այդ թվում վճարովի հիմունքներով մատուցված բժշկական օգնության և սպասարկման, ոչ բժշկական ծառայությունների վերաբերյալ) ներկայացում | Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի չտրամադրելը կամ տրամադրելուց հրաժարվելու դեպքում դեպքը փոխհատուցման չի ընդունվում:<br>Եթե Կատարողը հրաժարվում է տրամադրել կազմակերպության գործունեության վերաբերյալ օրենսդրությամբ չարգելված տեղեկատվություն, կամ տրամադրում է ոչ արժանահավատ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն, ապա նրա նկատմամբ կիրառվում է տուգանք ընդհանուր պայմանագրային գումարի 5%-ի չափով: |
| **Գլուխ Դ. Անվճար ստոմատոլոգիական մասնագիտացված բժշկական օգնության և սպասարկման ծավալները ընդգրկում են բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը՝ այդ թվում.** | |
| 1. Պացիենտի Բուժօգնության իրականացումը և էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացումը իրավական ակտերով սահմանված կարգով: | 1-ին կետում նշված պայմանները ՀՀ ԱՆ կողմից սահմանված ձևերով և կարգով չկատարման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 1000 դրամի չափով: |
| 2. Պացիենտի Բուժօգնության համար անհրաժեշտ լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունների ամբողջ ծավալով իրականացումը: | 2-րդ կետում նշված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների հաստատված ծավալները ամբողջովին կամ մասնակի չիրականացման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 2 000 դրամի չափով: |
| 3. Պացիենտին Բուժօգնության համար անհրաժեշտ դեղերով, նյութերով և պարագաներով ապահովումը: | 3-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 2 000 դրամի չափով: |
| 4. Նախարարի կողմից հաստատված կարգի համաձայն դեղերի, բժշկական նշանակության պարագաների ստացման, պահպանման, լրացման և հատկացման փաստաթղթային ձևակերպումները (մատյաններ, պահանջագրեր և այլ փաստաթղթեր): | 4-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում 150 000 դրամի չափով: |
| 5.Աշխատողների աշխատավարձը սահմանել Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին և այլ իրավական ակտերին համապատասխան, | 5-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում Կատարողի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ չվճարված աշխատավարձի 20%-ի չափով:<br>Տուգանքի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պարտավորությունները չվճարված կամ պակաս վճարած աշխավարձերի մասով ամբողջությամբ վճարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան: |

| | |
|---|---|
| 6.Պետական պատվերով բուժման իրավունք ունեցող պացիենտների Բուժօգնության նպատակով պացիենտների հերթագրման իրականացում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշմամբ հաստատված Բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորնած անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգի պահանջների: | 1. 6-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում առանց հիմնավորման արտահերթ բժշկական օգնություն ստացած պացիենտների բուժման դիմաց, փոխհատուցված գումարը նվազեցում է կատարողականից:<br>2. հերթագրված և հերթը հասած պացիենտների բժշկական օնությունը և սպասարկումը մերժելու և/կամ վճարովի իրականացնելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում յուրաքանչյուր դեպքի արժեքի չափով: |
| Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի կամ բուժհաստատության գործունեության վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի/ տեղեկատվության (այդ թվում վճարովի հիմունքներով մատուցված բժշկական օգնության և սպասարկման, ոչ բժշկական ծառայությունների վերաբերյալ) ներկայացում | Կատարողի կողմից իրականացվող մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների ժամանակ դեպքի/երի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի չտրամադրելը կամ տրամադրելուց հրաժարվելու դեպքում դեպքը փոխհատուցման չի ընդունվում:<br>Եթե Կատարողը հրաժարվում է տրամադրել կազմակերպության գործունեության վերաբերյալ օրենսդրությամբ չարգելված տեղեկատվություն, կամ տրամադրում է ոչ արժանահավատ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն, ապա նրա նկատմամբ կիրառվում է տուգանք ընդհանուր պայմանագրային գումարի 5%-ի չափով: |

*** Բացառությամբ պացիենտների կողմից գնման ենթակա քիմիոթերապևտիկ և օնկոհեմատոլոգիական դեղերի:**

*Հավելված 4*
*ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-302*
*Պայմանագրի*

**Գաղտնի**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

**ԱՆ գլխավոր քարտուղար՝**
**Վարդանուշ Գրիգորյան**

ԿԱՏԱՐՈՂ

**Տնօրեն՝**
**Մարատ Ստեփանյան**